ՅՈՒՆԻԲԱՆԿ | ԲԱՆԿ ԵՎ **ԱՎԵԼԻՆ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություններ		
1.	**Թողարկողը և տեղաբաշխողը**	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
2.	**Արժեթղթերի դասը**	Սովորական (հասարակ) բաժնետոմս
3.	**Արժեթղթերի ձևը**	Ոչ փաստաթղթային
4.	**Բաժնետոմսերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը (ISIN)**	AMUNIBS10ER5
5.	**Բաժնետոմսերի քանակը**	10,000,000 հատ
6.	**Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը**	100 ՀՀ դրամ
7.	**Մեկ բաժնետոմսի տեղաբաշխման արժեքը**	390 ՀՀ դրամ
8.	**Բաժնետոմսերի ընդհանուր անվանական ծավալը**	1,000,000,000 ՀՀ դրամ
9.	**Բաժնետոմսերի ընդհանուր տեղաբաշխման ծավալը**	3,900,000,000 ՀՀ դրամ
10.	**Բաժնետոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը և ծավալը**	Ձեռքբերման նվազագույն քանակը սահմանվել է 2,600 հատ, իսկ նվազագույն ծավալը՝ 1,014,000 ՀՀ դրամ
11.	**Առաջարկի իրականացման սկիզբը**	20.05.2026թ
12.	**Առաջարկի իրականացման ավարտը**	09.09.2026թ Եթե բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում այն օրը, երբ վաճառվել է վերջին բաժնետոմսը:

«Յունիբանկ» ԲԲԸ բաժնետոմսերի Ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2026թ. Մայիսի 13-ի Թիվ N 1/210Ա որոշմամբ:

Ներդրողները բաժնետոմսերի Ազդագրի և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերի տպագիր տարբերակները կարող են ձեռք բերել «Յունիբանկ» ԲԲԸ գլխամասային գրասենյակում (հասցե՝ ՀՀ, Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5) և մասնաճյուղերում (հասցեները տես բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am), իսկ էլեկտրոնային պատճենը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ www.unibank.am:

Բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով ներդրողը պետք է ներկայացնի բաժնետոմսերի ձեռքբերման հայտ՝ Բանկի կողմից հաստատված տիպային օրինակով «Յունիբանկ» ԲԲԸ ցանկացած մասնաճյուղում հայտը առձեռն ներկայացնելու միջոցով կամ Բանկի «Հաշվի բացման դիմում-հարցաթերթիկ»-ում նշված ներդրողի էլեկտրոնային հասցեից Բանկի որևէ մասնաճյուղի էլեկտրոնային հասցեին էլեկտրոնային տարբերակով հայտերի ներկայացման միջոցով, եթե ներդրողը հանդիսանում է «Յունիբանկ» ԲԲԸ հաճախորդ և նույնականացվել է: